

«Կյանքի որևէ տեսություն, եթե ուղեկցված չէ իմացության քննությամբ, ստիպված է նույնությամբ ընդունել այն հասկացությունները, որ դատողականությունը դնում է նրա տրամադրության տակ. նրան մնում է կամա թե ակամա տեղադրել փաստերը նախօրոք գոյություն ունեցող և իր կողմից վերջնական համարվող շրջանակների մեջ¹»:

Անրի Բերգսոն

ՏԱՐԵԳԻՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ*

Հայագիտության զարգացման վերաբերյալ մեզանում պարբերաբար ընդունվող ծրագրերը և դրանց իրականացման փորձերը առայժմ գտնվում են նմանակումային (իմիտացիոն) գործընթացների տիրույթում, որոնք լիուլի տեղավորվում են արդի հայ հասարակությանը բնորոշ թատերականացված պատկերացումների շրջագծում:

Նման ծրագրերում հայագիտությունն աստիճանաբար վերացարկվում է իր առանձին սուբյեկտներից՝ կոնկրետ գիտակարգերից² և դիտարկվում է իբրև մի նոր «գիտությունների գիտություն», որի գործառույթները խորհրդային շրջանում իրականացնում էր **գիտական կոմունիզմի** տեսությունը: Այդօրինակ արտաձևական (դեդուկտիվիստական) մոտեցումը խանգարում է այն փաստի գիտակցմանը, որ գիտաճանաչողական հարթության վրա գոյություն ունեն միայն կոնկրետ գիտությունները՝ իրենց ուսումնասիրության առարկաներով ու մեթոդներով: Ուստի՝ առանց վերջիններիս հետևողական զարգացման, հնարավոր չէ ունենալ գիտության արդի չափորոշիչներին հարիր հայագիտական որոշակի հայեցակարգ: Իսկ հետխորհրդային Հայաստանում հումանիտար ու հասարակական գիտությունների զարգացումն ուղղակի անհնար է՝ առանց 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի ընթացքում այդ ասպարեզում մարդկության կուտակած,

Գ. (Թ) փարի, թիվ 1 (33) հունվար-մարտ, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

* Ընդունվել է տպագրության 14. 03. 2011:
1 Անրի Բերգսոն, Մետաֆիզիկայի ներածություն: Ստեղծարար էվոլյուցիա, Եր., «Սարգիս Խաչենց», 2003, էջ 57:
2 «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող հոդվածներում «գիտակարգեր» հասկացության կողքին օգտագործվում է նաև «կրթանքներ» բնորոշումը, ինչը վկայում է մեր գիտնականների հասկացության համակարգի միասնականացման խնդրի առկայության մասին: Մեր հանդեսն իր առաջիկա համարներում պատրաստվում է կազմակերպել այս հարցի քննարկումը: Խմբ.

բայց մեզանում 70 տարի շարունակ «բուրժուական» տարուի տակ դրված ահռելի գիտատեսական ժառանգության ընկալման: Ուրեմն՝ միայն հետմարքսյան իմաստասիրական ու հասարակագիրական մտքի նվաճումների յուրացումը թույլ կտա արդիականացնել հայ ժողովրդի պատմության, գրականության ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող գիտակարգերը և դրանք դարձնել արդիական ըմբռնումով **գիտություններ**:

Ավելին՝ երբ անկախ պետականության ձևավորման փաստը Հայաստանը դարձրել է համաշխարհային պատմաքաղաքական գործընթացների սուբյեկտ, Հայոց պատմության, գրականության կամ մշակույթի ուսումնասիրությունը նույնպես պետք է իրականացվի ոչ թե նախկին՝ համամիութենական, կամ ներկա՝ գավառական, այլ համաշխարհային (գլոբալ) չափորոշիչներով: Քանզի անկախության պայմաններում ակնհայտ է դառնում, որ մենք իբրև ազգ կանգնել ենք գերմանացի ականավոր մշակութաբան Օսվալդ Շպենգլերի կողմից ժամանակին արձանագրված օրինաչափության առջև. «**Պետությունը կարծրացած պատմությունն է, իսկ պատմությունը՝ հոսուն պետությունը**³»: Նման ազգ-պետության կենսունակությունն ամրապնդվում է միայն այն պարագայում, երբ վերջինս «...վերապրելով իր ներքին պատմությունը... հասնում է այն վիճակին, երբ նրանում արթնանում են ստեղծագործական ուժերը և արտաքին պատմությունը, ինչը դրսևորվում է պատմության կերտման մեջ⁴»:

Հայագիտության անդրադարձով ասվածը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. հայագիտական կոնկրետ գիտակարգերի ուսումնասիրությունը ներկա պետական կեցության պահանջներին համապատասխանեցնելու «բանալին» **հայ պատմագիտության** արդիականացման խնդիրն է: Որովհետև անկախ պետականության պայմաններում պատմական գիտությունն է այն **առանցքային իմացական տարածքը**, որի արդիականացումը կարող է դառնալ ազգի ինքնաճանաչողության ուսպնյակը բյուրեղացնելու առաջին քայլը: Հայ պատմաբաններն իրականում լուրջ առաքելություն ունեն պետության ու ազգի առջև, փաստ, որը պետական մակարդակով մեզանում գիտակցվում է միայն Հայոց պատմության թուրք-ադրբեջանական նենգափոխումներին բախվելու պահերին: Մինչդեռ, հակառակորդի դեմ պայքարը հաջողությամբ առաջ տանելու համար հայ պատմագիտությանն անհրաժեշտ է դուրս գալ միջազգային ասպարեզ ոչ միայն **ֆիզիկապես**՝ տեղեկատվական-հրատարակչական գետնի վրա, այլև առաջին հերթին՝ **իմացական առումով**, ինչն անհնար է առանց համաշխարհային պատմագիտական մտքի հիմնական ձեռքբերումների, այդ թվում՝ նրա հասկացութային համակարգի յուրացման:

Խոստովանենք, որ հայագիտական մյուս առարկաների համեմատ, վերջին առաջադրանքի լուծումը թերևս ամենաբարդն է՝ քանի որ հայ պատմագիտությունը.

ա) առավել անմիջականորեն է կրել խորհրդային ամբողջատիրության գաղափարական պարտադրանքի լուծը և այդ պատճառով այսօր հայագիտական առարկաներից ամենապահպանողականն ու բնականաբար նաև՝ ամենահետամնացն է,

3 О. Шпенглер, Закат Европы: Очерки морфологии мировой истории. Т.2. Всемирно-исторические перспективы, Минск, 1999, с. 470.

4 Նույն տեղում, էջ 472 - 473:

բ) ժամանակակից ըմբռնումով՝ պատմագիտությունը ներառում է ոչ միայն իր ուսումնասիրության անմիջական առարկան՝ քաղաքական պատմությունը, այլև մյուս բոլոր հումանիտար ու հասարակական գիտությունների, մշակույթի ու տնտեսության անցած ուղու ընդհանրական պատկերը՝ դիաքրոնիկ (տարածամյա) կտրվածքով,

գ) իսկ ահա հորիզոնական կամ սինքրոնիկ (համաժամյա) հարթության վրա պատմագիտական ցանկացած լուրջ հայեցակարգի ձևավորման խնդիրը ենթադրում է համապատասխան տեսական-իմաստասիրական հիմքի պարտադիր առկայություն, մինչդեռ, խորհրդային պատմագիտությունից մեզ ժառանգություն մնացած մարքսյան մեթոդաբանությունը շուրջ մեկ ու կես դարի ընթացքում անհուսալիորեն հետ է մնացել համաշխարհային պատմության ընկալման արդի ուսմունքներից:

Հայ պատմագիտության ձևի ու բովանդակության այս աղաղակող անհամապատասխանությունը ոչ միայն նոր տեսության ու մեթոդաբանության բացակայության, այլև աշխարհագրական տրոհման արդյունք է: Պատմական ճակատագրի բերումով անցյալում այն հիմնականում զարգացել է Հայաստանյայց եկեղեցու, իսկ Նոր ժամանակներում նաև՝ Մխիթարյան հայրերի հովանու ներքո: Ավելի ուշ շրջանում մենք ունեցել ենք եվրոպակենտրոն մտածողության ենթահողի վրա ձևավորված՝ **Լեոյի, Հ. Մանանդյանի** և այլ գիտնական-անհատականությունների մտքի թռիչքներ, որոնց գագաթն է դարձել 1930-ականներին «Վեմ»-ի լավագույն աշխատակից **Նիկողայոս Ադոնցը**:

Խորհրդային շրջանում մեզանում տեղի է ունեցել խիստ հակասական մի գործընթաց՝ պատմագիտական համակարգի ձևավորումը, բայցև մեկուսացումը համաշխարհային պատմագիտական մտքի ընդհանուր հորձանուտից: Այն հսկայական մասնագիտական աշխատանքը, որ կատարվել է խորհրդային տարիներին՝ պատմական սկզբնաղբյուրների հավաքման ու գիտական ուսումնասիրության, կոնկրետ հիմնահարցերի լուսաբանման ասպարեզում, մեզանում ձևավորել է որոշակի պատմագիտական համակարգ-կառույց⁵:

Իսկ հետխորհրդային շրջանում համաշխարհային պատմագիտական մտքից մեկուսացած հայաստանյան պատմագիտությունը ձեռք է բերել **նկարագրական կամ շարադրական** բնույթ, ուստի հիմնականում զբաղվում է անցյալի իրադարձությունները վերապատմելու գործով: Արդյունքում, ի դեմս Հայաստանում հրատարակվող մենագրությունների, **եզակի բացառություններով հանդերձ**, մենք գործ ունենք գոյություն ունեցող մտակաղապարների մեջ տեղադրվող՝ համակարգված կամ ոչ համակարգված «փաստակույտերի» հետ, որոնք երբեմն սկսել են հատել անգամ 1000 էջի սահմանագիծը: Դրանց գիտականության չափույթը փաստորեն սահմանափակվում է նորահայտ արխիվային վավերագրերի միջոցով այս կամ այն իրադարձության հավաստիությունը պարզելու համեստ գործառույթով:

Ուստի բնական է, որ նման չափավոր նպատակներով առաջնորդվող հայ պատմագիտությունը հետխորհրդային շրջանում լիովին խճճվել է իր համար առաջնահերթ դարձած՝ անցյալի դեմքերի ու դեպքերի հետխորհրդային վերարժևորման ասպարեզում: Վերջին 20 տարիներին, որպես կանոն, պարզապես

5 Ավելի մանրամասն տես Վ. Բարխուդարյան, Խորհրդային պատմագիտության գնահատման հարցի շուրջը, «Պատմագիտության հարցեր», Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, էջ 108-127:

փորձ է արվել «շրջել» 70 տարի շարունակ ծավալված խորհրդային վարչակարգի ջատագովությունը: Բայց քանի որ այդ առաջադրանքը հիմնականում իրականացրել են հայեցակարգային ու մեթոդաբանական առումով հին մտակաղապարները չհաղթահարած գիտնականները, ապա նրանք կանգնել են խորհրդային «գործիքներով» խորհրդային արժեքները «ջախջախելու» տարօրինակ առաջադրանքի առջև: Ուստի՝ նոր պայմաններում բավականին մոդայիկ դարձած ազգային գործիչների ջատագովությունը, մասնավորապես, հայ ազգային-ազատագրական պայքարի մի շարք դեմքերի՝ Անդրանիկի ու մանավանդ Գարեգին Նժդեհի խորհրդային մտակաղապարներով իրականացված անզուսպ գովերգումը կտրվել է 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների գաղափարաքաղաքական գործընթացների ընդհանուր հունից՝ վերածվելով նոր, այս անգամ՝ ազգային «**Լեհին պապիկներ**» կերտելու գործընթացի:

Անշուշտ, պատմաբանների հին սերնդի մոտ արգելքների դարաշրջանում ձևավորված մտածողության համակարգի առկայության փաստը հասկանալի է ու օրինակալի և շատ ավելի բարոյական, քան «հին գործիքներով նոր անդաստանը մշակելու» զավեշտական փորձերը: Հետխորհրդային շրջանում ավագ սերունդը կատարել է իր առաքելությունը՝ դժվարին պայմաններում պահպանել է պատմագիտական համակարգ-կառույցը: Ուստի, երբ ներկայումս նրա «կարծրացած ակադեմիզմը» քննադատության է արժանանում մոդայիկ կարգախոսներով առաջնորդվող դիլետանտների կողմից, վերարժևորումների քողի տակ տեղի է ունենում գիտականության չափորոշիչների ոչնչացում, ինչը նկատվում է նաև Ռուսաստանի և այլ հետխորհրդային երկրների պատմագիտության մեջ⁶: Իրականում «կարծրացած ակադեմիզմի» ու «նորարարական» դիլետանտության փակուղային բանավեճը կարող է հաղթահարվել միայն այն պարագայում, երբ մեր պատմաբանների նոր սերունդը խորապես յուրացնի արդի համաշխարհային պատմագիտական մտքի տեսական ու մեթոդաբանական մոտեցումները:

Այսինքն՝ բուն խնդիրը գտնվում է ոչ թե **ժխտման**, այլ **հաղթահարման**, ավելի ճիշտ՝ **ինքնահաղթահարման** տիրույթում: Իսկ «հին գործիքներով նոր անդաստանը մշակելով» զբաղված հայաստանյան նկարագրական պատմագիտությունը իրականում 20 տարի շարունակ սովորական պտույտներ է գործում Կ. Մարքսի «Թեգիսներ Ֆոյերբախի մասին» աշխատության 11-րդ թեգիսի շրջագծում. «Փիլիսոփաները միայն տարբեր կերպ են բացատրել աշխարհը, բայց խնդիրը նրա փոփոխության մեջ է⁷»: Պատճառն այն է, որ բացատրելու համար անհրաժեշտ նոր տեսության ու մեթոդի բացակայության պայմաններում մնացել է միայն փոփոխության առաջադրանքը, մինչդեռ գիտնականի համար առաջնայինը հենց բացատրելու խնդիրն է: Պատահական չէ, որ «...դատելու սովորույթը վերջ է վեր-

6 Վերջին երկու տասնամյակներում հետխորհրդային տարածքի երկրներում ստեղծվող և պատմության մեջ միայն համաշխարհային դավադրություններ ու մասոններ փնտրող նման «ուսումնասիրությունները», ռուսաստանցի հետազոտող Յու. Սեմյոնովը իրավացիորեն բաժանել է երեք խմբի: Առաջին **ծառայողական առասպելաբանություն**, որը նախատեսված է երկրի նոր տերերին հաճոյանալու համար, երկրորդ՝ **գառանցական առասպելաբանություն**, այսինքն՝ հիվանդ երևակայություն ունեցող մարդկանց մտքի արգասիք և վերջապես, երրորդ, գիրք վաճառելու նպատակով ստեղծվող **շուկայական առասպելաբանություն**: Տե՛ս Юрий Семёнов, История (историология) как строевая наука, http://scepis.ru/library/id_155.html

7 <http://lugovoy-k.narod.ru/marx/103/01.htm>

ջո հետ է մղում բացատրելու ցանկությունը...⁸» տխուր օրինաչափությանը ականավոր պատմաբան Մարկ Բլոկը ժամանակին հակադրել է իր հանճարեղորեն պարզ տարակուսանքը. «Պարոնայք ռոբեսպիերիստներ, հակառոբեսպիերիստներ, մենք թողություն ենք խնդրում ձեզանից. Աստծո սիրուն, պարզապես ասացե՛ք մեզ՝ ինչպիսի՞նք էր Ռոբեսպիերը⁹»:

Հետխորհրդային հայ պատմագիտության անդրադարձով ասվածը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. մեր նախկին «ռոբեսպիերիստների» ներկա «հակառոբեսպիերիզմը» իրականում շրջված բոլշևիզմ է՝ «ազգային» ցուցանակի տակ: Որովհետև բավական չէ փոխել գիտական գործունեության **օբյեկտը**. անհրաժեշտ է նաև նրա **սուբյեկտի** հետևողական ինքնակատարելագործումը՝ «ներքին հեղափոխությունը»:

Ու քանի որ վերջին 20 տարիներին մեզանում տեղի է ունեցել ճիշտ հակառակը՝ **համաշխարհային պատմագիտական մտքի տեսական ու մեթոդաբանական մոտեցումների անտեսումը, հետխորհրդային շրջանի հայ պատմագիտությունը 19-րդ դարի կեսերին մշակված մարքսիզմի գիտական մոտեցումների դաշտից աստիճանաբար տեղափոխվել է ոչ թե 21-րդ դար, այլ դեպի հետ՝ միջնադարյան տարեգրությունների ու աննալների ժամանակները**: Ուստի պատահական չէ, որ մեր ավագ սերնդի մասնագետ-պատմաբանները հաճախ երանությամբ են վերհիշում խորհրդային շրջանում առկա մարքսյան մեթոդաբանության հստակությունը, քանզի արդի նկարագրական պատմագիտությունը սոսկ նախկինի «շրջված» է իր գիտական պարունակությունից դատարկված տարբերակն է:

Հարկ է նաև հիշեցնել, որ անգամ տարեգրությունների ու աննալների հեղինակները (չխոսելով արդեն՝ հայ պատմիչների մասին), իրենց ամենապարզ շարադրանքի մեջ նույնպես որոշակի իմաստ էին փնտրում՝ պատմության իմաստը: Եվ նրանցից սկսած՝ մինչև 20-րդ դար, մինչև Ֆերնան Բրոդել¹⁰ ու Ֆրենսիս Ֆուկույամա¹¹, պատմության իմաստի փնտրտուքը առանցքային նշանակություն է ունեցել և այսօր էլ ունի պատմագիտության համար:

Հայ պատմագիտությունը գիտական հետազոտության նոր մեթոդներով զինելու հրամայականը մեզանում երբեմն հանդիպում է այն պարզունակ հակազդեցությանը, թե իբր՝ այդ ամենը ոչ թե պատմաբանների, այլ պատմության փիլիսոփայության գործն է, ինչը ոչ միայն վիրավորական է իրեն գիտնական համարող յուրաքանչյուր պատմագետի համար, այլև հիմնավորապես սխալ՝ պատմական գիտության ու պատմության փիլիսոփայության փոխհարաբերակցության խնդրի տեսանկյունից: Զանգի պատմափիլիսոփայությանը բնորոշ երկու հիմնական յուրահատկություններն են նրա **համընդհանրականությունն** ու **մտահայեցողականությունը**, մինչդեռ պատմագիտության հետազոտական աշխատանքները հիմնվում են ճիշտ հակառակ մեկնակետի՝ եզակիի ու անկրկնելիի վրա¹²: Սակայն

8 Marc Bloch, Apologie pour l'histoire ou métier d'historien, http://classiques.uqac.ca/classiques/bloch_marc/apologie_histoire/apologie_histoire.html

9 Նույն տեղում:

10 Տե՛ս Бродель Ф. Время мира. Материальная цивилизация, экономика и капитализм XV-XVIII вв., М. «Прогресс» 1992. Ավելի մանրամասն տես «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող Սմբատ Խ. Գովհաննիսյանի հոդվածը:

11 Տե՛ս Фукуяма Ф. Конец истории и последний человек. М. «Ермак», 2004. Տե՛ս նաև Фукуяма Ф. Конец истории? «Вопросы философии», 1990, № 3.

12 Տե՛ս Գամբետ Ա. Գևորգյան, Դիտողություններ պատմության փիլիսոփայության առարկայի մասին. Կանտից մինչև նորականտականություն, «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ», Եր., ԳԳ ՊԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 267-306:

ելակետերի այս տարբերությունը չի նշանակում, որ եզակիից մինչև համընդհանրականն ընկած ահռելի տարածքը հնարավոր է ուսումնասիրել պատմության փիլիսոփայությանը բնորոշ՝ մոտեցումներով, որովհետև կոնկրետ փաստից չբխող որևէ եզրակացության անթույլատրելիությունից (Լեոպոլդ ֆոն Ռանկե) տրամաբանորեն բխում է նաև փաստերի վրա հիմնվող համապարփակ գիտական մեկնաբանության՝ պատմագետի անվիճելի իրավունքը: Ավելին՝ 20-րդ դարի երկրորդ կեսի ականավոր պատմագետ Ֆերնան Բրոդելի բնորոշմամբ՝ պատմությունը երբեմն իրեն պահում է նաև առաջ ու հետ դարձող իսպանական շքախմբի մման, քանզի իբրև հարաշարժ (դինամիկ) կառույց **«...կազմված է իմաստից ու անիմաստությունից: Նա ոչ միայն աստված է, այլև դև»¹³**: Չպետք է մոռանալ նաև, որ եթե անգամ պատմափիլիսոփաները ինչ-որ բան են առաջարկում պատմաբաններին, մինևույն է, այն կիրառել-չկիրառելու հարցը **մենք ինքներս ենք որոշում**¹⁴: Ուստի հայաստանյան արդի նկարագրական պատմագիտության ներկա պարզունակ՝ արհեստավորահամաբարական պատկերացումները սնանկ են բոլոր առումներով՝ **և՛ պատմագիտության, և՛ պատմափիլիսոփայության և՛ ընդհանրապես՝ առողջ բանականության տեսանկյունից**:

*Այս կապակցությամբ տեղին է հիշել մեկ այլ ականավոր պատմագետ, Աննալների դպրոցի հիմնադիր Լ. Ֆերի դիպուկ գնահատականը. «Պատմությունն այնպիսի արհեստ է ինչպես և բոլոր մյուսները: Նա զգում է բարեխիղճ արհեստավորների, փորձառու աշխղեկների կարիքը, որոնք ընդունակ են աշխատանքը կատարել ուրիշների կողմից կազմված պլանով: Նա զգում է նաև լավ ճարտարագետների կարիքը: Եվ նրանք է, որ պետք է առարկաներին նայեն ամենևին էլ ո՛չ հիմնաբարի բարչրությունից: Նրանք պետք է կարողանան մշակել պլաններ, ընդարձակ պլաններ, համընդգրկուն պլաններ, որոնց իրականացմամբ այնուհետև կգրադվեն բարեխիղճ արհեստավորներն ու փորձառու աշխղեկները: Իսկ որպեսզի կազմվի ընդարձակ ու համընդգրկուն պլան հարկավոր է ունենալ լայն և հարակ միտք: Հարկավոր է սքալի և սևեռուն կերպով նայել իրերին: Համաշայնության մեջ գործել իր ժամանակի ռիթմի հետ: Արել այն ամենը, ինչը մասն է, նեղ, գռեհիկ, իր դարն սպրած: Մի խոսքով՝ **հարկավոր է մտածելու ունակ լինել** (ընդգծումը մերն է- Գ. Խ.)¹⁵»:*

Վերլուծելով 19-րդ դարի կեսերին ծաղկում ապրած մարքսյան ուսմունքից հետո պատմագիտության անցած բարդ ու հակասական ուղին, հարկ է նշել, որ ինչպես մարքսիզմի, այնպես էլ զուգահեռաբար տարածում գտած պոզիտիվիզմի տեսական-մեթոդաբանական մոտեցումները գիտական մտքի զարգացման որոշակի հանգրվաններ էին:

Ավելին՝ շնորհիվ **Հ. Բոքլի** և այլ ականավոր պատմաբանների, պոզիտիվիստական մեթոդաբանությունը պատմական երևույթների բացատրության իր բնագիտական, կենսաբանական և հոգեբանական պատճառականությամբ հսկայական դեր խաղաց պատմական գիտության զարգացման մեջ: Բայց արդեն 19-րդ դարի վերջերին՝ բնագիտության զարգացման արդյունքում ճեղքեր տված աշխարհի ճանաչողության մարքսյան մեթոդաբանությունը հակադրված նոր կանտականության ներկայացուցիչներն ի դեմս **Վ. Վինդեբանդի** և **Հ. Ռիկերտի**,

13 Տե՛ս «El Pais». 1985. 14 nov.

14 Ընդգծելով այս բառերը, ցանկանում ենք մատնանշել սեփական պատասխանատվությունը՝ ստեղծված իրավիճակի հաղթահարման ճշգրիտ դեղատոմսերը գտնելու հարցում: Խմբ.:

15 Февр Л. Бой за историю. М., 1991. С. 38.

հիմնավորեցին բնագիտական ու հասարակական գիտությունների հետազոտական մեթոդների տարանջատման խնդիրը՝ **նոմոքեմիկ** և **իդիոգրաֆիկ** մոտեցումների տարբերությունը:

19-րդ դարի վերջերից և հիմնականում 20-րդ դարում սկիզբ է առնում պատմության **շրջափոլային-առաջադիմական** զարգացման մասին պատկերացումների փոխարինումը պատմամշակութային երևույթների **զուգահեռ-դիսկրետ** ընկալման վրա հիմնվող **մշակութային** կամ **քաղաքակրթական համադրույթներով**: Առաջինն այդ գաղափարին հանգած ռուս պրոֆեսոր Ն. Դանիլևսկուն հետևեցին Օ. Շպենգլերը, Ա. Թոյնբին, Ա. Գումիլյովը և նրանց աշակերտները:

Պատմության մեջ անհատի դերը կարևորող 19-րդ դարի փիլիսոփայական ու պատմագիտական դպրոցների դրույթների հիման վրա 20-րդ դարում ձևավորվեց դասական **վոլյունտարիզը**՝ Խ. Օրտեգա-ի - Գասսետ, Կ. Պոպպեր, որը նոր կանտականների նման, կասկածի տակ դրեց պատմության՝ գիտություն լինելու իրողությունը: 20-րդ դարում ստեղծվեցին նաև **սոցիալ-հոգեբանական** գործոնների առաջնության վրա հիմնվող այլ ընկերաբանական ու պատմագիտական համադրույթներ՝ Պ. Սորոկին, Կ. Յասպերս, Ֆ. Ֆոկոյամա և այլք:

Նույն 20-րդ դարում ռուսական բոլշևիզմի ծնունդ «նոր միջնադարի» դեմ պայքարում առաջ եկավ պատմության մեջ անհատականության դերը կարևորող ռուսական (Ն. Բերդյաս) և ֆրանսիական (Է. Մունյե) **պերսոնալիզմը**:

Պատմագիտության զարգացման վրա որոշակի ազդեցություն գործեց ֆրանսիացի ակադեմիկոս փիլիսոփա Ա. Բերգսոնի **ինտուիտիվիստական** ուսմունքը, առաջ եկան նաև պատմությունը **կենսաբանական և սոցիալ-կենսաբանական** պատճառականությամբ բացատրող հայեցակարգեր՝ Ժ. Դյուբի, Ջ. Ֆրեյդ և այլք:

20-րդ դարի համաշխարհային պատմագիտության զարգացման մեջ ահռելի ներդրում ունեցան ֆրանսիական «Աննալներ» ամսագրի շուրջը համախմբված՝ նույնանուն դպրոցի առաջին՝ Լ. Ֆևր, Մ. Բլոկ, երկրորդ՝ Ֆ. Բրոդել և ներկայումս գործող երրորդ սերնդի ներկայացուցիչները: Դեռևս Մ. Բլոկի կողմից հիմնավորված «**համադրական պատմության**» և նրա զարգացումը դարձած Ֆ. Բրոդելի «**համընդգրկուն պատմության**» հայեցակարգերը լիովին խարխլեցին պատմությունը «մեկ շարժիչով» բացատրող միագիծ ընկալումների հիմքերը:

Պատմական գիտության «սնուցիչների» դեր խաղացին նաև 20-րդ դարում աննախադեպ վերելք ապրած մշակութաբանությունը, սոցիալական մարդաբանությունը, տնտեսագիտությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան և այլ գիտությունները, որոնց զարգացումը մեծապես նպաստեց պատմաքաղաքական գործընթացների պատճառականության պլյուրալիստական մեկնաբանության տարածմանը (Ջ. Ռոբինսոն, Է. Դյուրկհայմ, Հ. Բառնես և այլք):

Դրան զուգահեռ՝ հսկայական առաջընթաց ապրեց ինչպես **ընդհանուր-գիտական**, այնպես էլ **հումանիտար գիտությունների և պատմագիտության** հետազոտական մեթոդների մշակման գործը՝ պոզիտիվիզմից, Հայդեյրեդայան դպրոցի մեթոդաբանությունից մինչև այդ բնագավառի դասականները դարձած **Շ.-Վ. Լանգլուայի և Շ. Մեյյոբուսի** մեթոդաբանական հետազոտությունները: Այս ասպարեզում կարևոր էին նաև ռուս մինչխորհրդային (**Ն. Կարեն, Ա. Լապպո-Դանիլևսկի**) և խորհրդային հետազոտողների (**Մ. Խվոստով, Ա. Դանիլով**), հարցադրումներն ու դասախոսությունները:

Թվարկումների այս շարքը կարելի է շարունակել անվերջ՝ ապացուցելու համար, որ սեփական հայեցակարգի ստեղծման առաջադրանքը պատմության փիլիսոփայության վրա փոխադրելու՝ նկարագրական պատմագիտության փորձերը միայն ու միայն ինտելեկտուալ անկարողության խոստովանություն են: Նույնիսկ պատմության փիլիսոփայության դիրքերից սեփական «արհեստի» կարևորությունը բացարձակաճանաչող Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր **Պ. Գարդիները** չի կարողացել չխոստովանել, որ «պատմության մեջ» եղած հարցերի քննությունը եղել ու մնում է մասնագետ պատմաբանների գործը, քանզի պատմության փիլիսոփայության առարկան միայն «պատմության մասին»¹⁶ հարցերն են: Մինչդեռ դրանցից առաջինի գիտական քննությունն ուղղակի անհնար է առանց պատմության տեսության ու մեթոդաբանության, որոնք կազմում են «**պատմական ճանաչողության բարձրագույն և ամենակատարելագործված և ոչ թե իրադարձությունների մասին կոնկրետ-պատմական պատկերացումների մակարդակը**»¹⁷

Համաշխարհային գիտական միտքը ողջ 20-րդ դարի ընթացքում ծավալել է աննախադեպ սրության դիսկուրս պատմական ճանաչողության տեսական ու մեթոդաբանական հարցերի շուրջ, որն իր արտացոլումն է գտել այնպիսի առաջատար հանդեսներում, ինչպիսիք են՝ “Annales”, “Comparative Studies in Society and History”, “History and Theory”, “Journal of Interdisciplinary History”, “Past and Present” և այլն: Վերակառուցման դարաշրջանից սկսած՝ նույնպիսի սուր բանավեճեր են ծավալվել նաև խորհրդային և ապա ռուսական հանդեսներում:

Ավելին՝ հետխորհրդային շրջանում մեր վիճակում հայտնված ռուսական պատմագիտական միտքը՝ շնորհիվ Ն. Սմոլենսկու, Բ. Մոզիլնիցկու, Լ. Կուզեվանովի և այլոց, արդեն մեծ աշխատանք է կատարել հետմարքայան պատմագիտության ահռելի ժառանգության ընկալման, յուրացման և նրա տեսական հարցադրումներն ու գիտական հետազոտության նորագույն մեթոդներն օգտագործելու ասպարեզում: Թարգմանվել ու հրատարակվել են 20-րդ դարի համաշխարհային պատմագիտության հսկաների աշխատությունները, ստեղծվել և երեք անգամ հրատարակվել է մասնագետ պատմաբաններ պատրաստելու համար խիստ անհրաժեշտ «Պատմության տեսություն ու մեթոդաբանություն» բուհական ձեռնարկը:

Այսպիսով՝ հսկայական է այն առաջընթացը, որն անցած մեկ ու կես դարի ընթացքում ապրել է պատմագիտությունը՝ պատմության որպես գիտության առարկայի հստակեցման, պատմագիտության ու բնագիտության ճանաչողական մեթոդների տարբերակման, պատմական գիտության սոցիալական գործառույթների որոշակիացման, և իհարկե՝ հիմնական մեթոդաբանական սկզբունքների արդիականացման առումով: Վերջին տասնամյակներում պատմագիտական նոր մտեցումների արտահայտություններ են դարձել **պոստմոդեռնիզմը, առոնին պատմությունը, միկրոպատմությունը, մենթալականության** պատմությունը, **բանավոր** պատմությունը, **գենդերային** պատմությունը և այլն:

Այս ամենից դժվար չէ եզրակացնել, որ 21-րդ դարի երկրորդ տասնամյակը քնակոխած հայ պատմագիտության ներկա նկարագրական-քանակական «աճը» պարզապես «գիտությամբ զբաղվելու» անխմաստ **նմանակում** է:

Գիտակցելով այն հանգամանքը, որ հայ պատմաբանների համար ևս վաղուց

16 Stéu Gardiner P. The Nature of Historical Explanation. London, 1965. P. X.

17 Смоленский Н. И. Теория и методология истории, М., Издательский центр «Академия», 2010, с. 3.

արդեն հասունացել է պատմության տեսության ու մեթոդաբանության հարցերի ուսումնասիրությունն առաջին պլան մղելու ժամանակը, «ՎԷՄ» հանդեսը իր «Պատմության տեսություն», «Մոցիալական մարդաբանություն» և այլ բաժինների միջոցով սկսում է այդ գործը: Համոզված ենք, որ ներկայումս հայ պատմաբաններին բաժին ընկած **տարեգիրների ժամանակը** հաղթահարելու առաջադրանքը սեփական մասնագիտությունը հարգող ու դեռևս մտածելու ունակությունը չկորցրած յուրաքանչյուր գիտնականի առաջնահերթ գործն է:

Խմբ.: ԽՄԲԱԳԲԱԿԱՆ

THE TIME OF ANNALISTS

Editorial

Գ. (Թ) փարի, քիվ 1 (33) հունվար-մարտ, 2011

ՎԷՄ համահայկական հանդես